ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմը հայտարարում է մրցույթ՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության **«Նոր Գեղիի առողջության առաջնային պահպանման կենտրոն»** առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար:

Կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

1. Բարձրագույն բժշկական կրթություն և հանրային ծառայության առնվազն չորս տարվա աշխատանքային ստաժ կամ առողջապահական բնագավառի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ:

2. **<u>Մրցույթը կանցկացվի 2024 թվականի մարտի 7-ին, ժամը 11:00-ին</u>**:

3. Մրցույթին մասնակցելու համար դիմումատուները Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմ են ներկայացնում՝

1) դիմում, որում նշվում է հավակնորդի անունը, ազգանունը և հայրանունը (անձը հաստատող փաստաթղթում հայրանվան առկայության դեպքում), հաշվառման և բնակության վայրը, հեռախոսահամարը կամ էլեկտրոնային փոստի հասցեն (դրանց առկայության դեպքում).

2) մեկ լուսանկար 3 x 4 չափսի.

3) աշխատանքային ստաժը հավաստող փաստաթուղթ.

4) ինքնակենսագրություն.

5) անձը հաստատող փաստաթղթի պատճեն.

6) բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի հավակնորդի դեպքում՝ նաև պարտադիր զինվորական ծառայություն անցած լինելու հանգամանքը հավաստող կամ այլընտրանքային ծառայություն անցած լինելու կամ պարտադիր զինվորական ծառայությունից ազատված լինելու կամ տարկետման մեջ գտնվելու փաստը հավաստող փաստաթղթի) պատճեն.

7) տեղեկանք՝ դատվածության, դատվածությունը հանված կամ մարված լինելու վերաբերյալ (Արտաքին գործերի նախարարությունից).

8) տեղեկանք՝ սնանկության կամ դրա բացակայության վերաբերյալ (Պետական եկամուտների կոմիտեից).

9) տեղեկանք՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հիվանդությունների բացակայության վերաբերյալ (արտահիվանդանոցային պայմաններում

բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունից, որտեղ համապատասխան կարգով կցագրված է դիմումատուն).

10) հավակնորդի ցանկությամբ՝ հրատարակված գիտական հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ՝ դրանց առկայության դեպքում.

11) բնութագիր՝ վերջին աշխատավայրից (ըստ դիմումատուի ցանկության).

12) Կազմակերպության զարգացման և բարեփոխման հայեցակարգը (ներկայացվում է մրցույթի անցկացման օրվանից առնվազն երեք օր առաջ, ինչի վերաբերյալ կազմվում է հանձնման-ընդունման ակտ), որը ներառում է Կազմակերպության զարգացման և բարեփոխման, ինչպես նաև Կազմակերպության մասնագիտական, ֆինանսատնտեսական և կառավարման ոլորտի զարգացման հիմնական ուղենիշները, Կազմակերպության կառուցվածքի և գործունեության բարեփոխմանն ուղղված առաջարկությունները:

4. Հավակնորդը փաստաթղթերը ներկայացնում է առձեռն կամ առցանց՝ բացառությամբ Կազմակերպության զարգացման և բարեփոխման հայեցակարգի, որը ներկայացվում է առձեռն:

5. Առձեռն փաստաթղթերը ընդունվում են ամեն օր, բացի ոչ աշխատանքային օրերից:

<u>Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2024 թվականի փետրվարի 5-ը:</u>

Մրցույթը կկայանա Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի շենքում (գտնվելու վայրը՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, Հրազդան քաղաք, Կենտրոն թաղամաս, վարչական շենք):

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկությունների, ինչպես նաև հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմ (գտնվելու վայրը՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, Հրազդան քաղաք, Կենտրոն թաղամաս, վարչական շենք, Անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչություն, հեռախոս 0223 2-05-15):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՄԱՐԶՊԵՏ ԱՀԱՐՈՆ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

ՔԱՂԱՔԱՑԻ

.....
Դիմողի անունը ազգանունը հայրանունը

.....
Դիմողի բնակության վայրը

.....
Դիմողի հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն

ԴԻՄՈՒՄ

Ներկայացնում եմ իմ փաստաթղթերը ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության **«Նոր Գեղիի առողջության առաջնային պահպանման կենտրոն»** առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու նպատակով անցկացվող մրցույթին մասնակցելու նպատակով:

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

Առդիր՝ ..... էջ:

Դիմող .....
ստորագրություն

«.....» ..... 2024 թ.